

ՑՈՒՑԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ա. ԷԶՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ¹

№ 27

Ա.Ի.ԵՏԱՐԱՆ,

Թերթեր՝ 245:— Պրակներ՝ 23, յուրաքանչյուրը միջին հաշվով 12 թերթից:— Մեծուքյունը՝ 25,5×18,5×7:— Նյութը՝ սպիտակ թուղթ:— Կազմը՝ տախտակից՝ կարմիր թավշով պատած: Առաջին երեսի վրա արծաթապատ կողազարդեր, մեջտեղը կյոռ շոքանակի մեջ արծաթյա խաչելութուն: Կողերը պատած են արծաթյա վեց հրեշտակների պատկերներով: Երկրորդ կողմի վրա դրսից փակցված է արծաթյա խաչ 9 բևեռներով: Խաչի վրա գրված է հետևյալը. «Սուրբ աւետարանս յիշատակ է Ենկիբէկի որդի Թովմասին: Թվին ՌՃ...Բ: Աստուած ողորմի իւր հոգոյն»: Վիճակը՝ բավարար:— Գրությունը՝ երկայուն:— Տողերը՝ միջին հաշվով 23:— Գիրը՝ բոլորգիր:— Զարդագրութուն՝ կան լուսանցազարդութուններ, թռչնազրեր, խորաններ, չորս ավետարանիչների նկարներ և զանազան պատկերներ Նոր Կտակարանից:— Ժամանակը՝ 1520 թ.:— Գրիչը՝ Մկրտիչ:— Կազմողը՝ Զաքարիա:— Գրչության վայրը՝ Վան:— Պատվիրատուն՝ Խոջա Սիմեոն:— Պահպանակ՝ մագաղաթյա, սկզբում և վերջում մի մի թերթ: Առաջին պահպանակը խոշոր բոլորածե երկաթագիր է, պարունակությունը Հովհաննու ավետարանի 18-րդ գլխից: Երկրորդ պահպանակը՝ մանր ուղղագիր երկաթագիր է, պարունակությունը Հովհաննու ավետարանի 7-րդ գլխից:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ.

Թ. 241ա—242բ.— Փառք անըսկրգբանն...

Արդ՝ որք բաց եւ յստակ ունին զայս մտացն եւ լուսատեսակ զհոգւոյն տեսարանս, գանձեն անձանց իւրեանց անկողոպտելի շահս, որ միշտ ունի զկայ ընդ Աստուծոյ եւ ոչ ական հատանի վնասակար գողոգ:

Արդ՝ տեսեալ եւ իմացեալ զսորա անճառելի աւետիքն եւ զահագին սպառնալիքն եւ դամեկեցուն փրկագործութեան խորհուրդ ամէնաւրհնեալն եւ հոգիացեալն ի վարս ամենայն առաքինութեան աստուածաւէր եւ ի մաստուն տանուտէրն՝ Խօջա Սիմէոնն և կինն՝ Բեկիջանն: Եւ ստացան զանառիկ մեծութիւնս եւ զփարթամ հարստութիւնս՝ զպայծառութիւնս եւ զուրախութիւնս մանկանց եկեղեցւոյ, զտէրունեան աւետաբեր սուրբ աւետաբանս Քրիստոսի Աստուծոյ յիշատակ բարի հոգւոյ փրոյ եւ ծնողացն աստուածապաշտիցն եւ դատերն Բեկիսիսանին եւ որդոցն, Բ (2) Սմբատին, Խլղաթին, Մուրատբախշին, Էզդանբախշին եւ Ատոմին եւ միւս դատերացն՝ Մախսումին,

Խանզատին եւ Խան Սօլթանին եւ Բեկիսիսանի տղայոցն՝ պարոն Գորգին եւ Թագւորին եւ փոխեցելոցն ի Քրիստոս Թաղրի Ղուլուն եւ դատերացն՝ Փաշաբեկուն, Խանբեկուն, եւ Բեկիջանին, եւ Խօջա Սիմէոնի, քուէրն՝ Շախգուլին եւ նորին դատերացն՝ Գուլումին եւ Թաթարին եւ այլ ամենայն արեան մերձաւորաց նոցին, ամէն:

Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զվերոյիշեցեալս ի սմա զԲեկիսիսանն, զեղբայրն իւր՝ զՍմ(բ)ատն, որ նորափեսայ փոխեցաւ ի Քրիստոս եւ սուգ անմխիթար եթող ծնողացն եւ զծնողան իւր զԽօջա Սիմէոնն եւ զԲեկիջանն եւ զայրն իւր զեղբանբախշն եւ զնորին ծնողան զՄիրանշէն եւ զԱսլի Մէլէքն եւ զհօրեղբայրքն՝ զԿիրակոսն եւ զԽալիֆէն եւ զայլ ամենայն արեան մերձաւորքն իւր, զկենդանիսն եւ զհանգուցեալսն ի Քրիստոս եւ ի բերանով եւ ուղիղ սրտիւ Աստուած ողորմի ասացէք նոցա, որ ստացան զսուրբ աւետարանս ի հալալ վաստակոց իւրեանց եւ ետուն ի դուռս սուրբ առաքելոցս՝ Պօղոսի եւ Պետրոսի, յիշատակ բարի հոգւոց իւրեանց: Եւ մի՛ որ իշխեսցէ հեռացուցանել, զսա ի դրանէ սուրբ Առաքելոցս՝ սոռանալով, ծախելով եւ կամ գրաւելով, ո՛ր ի մերոց եւ ո՛չ յօտարաց: Եւ եթէ որ լանդրգնի եւ առնէ, նա պատժի ի սուրբ Առաքելոցս, ամէն:

Արդ՝ որք վաւելէք յաստուածային բուրաստանէս եւ յամենալի սեղանոյս, ուղիղ սրտիւ եւ ի բերանով Աստուած ողորմի ասացէք Խօջա Սիմէոնին եւ կենակցին՝ Բեկիջանին եւ զեղեցեալսն որդոյն՝ Սմեատին եւ հոգեւոր որդոյն՝ Մուրատին, եւ Աստուած կարգացողացդ եւ լսողացդ առհասարակ ողորմեսցի, ամէն:

Եւ արդ՝ ես յետինս ի կառուարաց եւ անիմաստս ի գիրս գրութեան, Մկրտիչ քահանայ, ոչ ունելով իշխանութիւն հպիլ ի սուրբ աւետարանս, բայց յիշելով զնեղութիւնս Աստուծոյ, շնորհիւ նորին սկսայ եւ ողորմութեամբն Աստուծոյ կատարեցի գտէրունեան սուրբ աւետարանս և թուականութեանս հայոց մեծագ ԶԿԹ (1520) ամին, յերկիրս Վասպուրականի, ի մալաքաղաքս Վան ևոյցեալ, ընդ հովանեաւ սրբազան առաքելոցս Պետրոսի եւ Պօղոսի, ի հայրապետութեան Տեառն Սարգիս կաթողիկոսի մեծ աթոռուն Էջմիածնի, եւ յառաջնորդութեան սուրբ ուխտոյս Վարադայ Կարապետ արհեպիսկոպոսի: Եւ ի դանութեան յաղթող իշխանին Շահիսմայելի եւ տեղապահութեան Շամիրամակերտիս Սօլթանի: Յայսմ ամի գրեցաւ սուրբ ա-

1. Սկիզբը մայիս-հունիս, հուլիս-օգոստոս և սեպտեմբեր-հոկտեմբեր համարներում:

անտարանս Քրիստոսի: Որք վայելէք զաստուածաբան անտարանս, Աստուած ողորմի ասացէք ինձ, անարժան Մկրտիչ գրողիս եւ ծնողաց իմոց՝ Գրիգոր քահանայի եւ Գողալի եւ այլ ամենայն արեան մերձատրաց իմոց, եւ լի բերանով եւ ուղիղ սրտիւ Աստուած ողորմի ասացէք, եւ Քրիստոս Աստուած, որ առատն վ ի տուրս բարեաց, ձեզ եւ մեզ տացէ զիւր առատ ողորմութիւնն եւ զերկնից արքայութիւնն, ամէն:

Եւ ինձ, Զաքարիայ գրողիս, որ զկէս զըլխոյս գրեցի եւ կազմեցի, լի բերանով Աստուած ողորմի ասացէք եւ իմ ծնողացն, ամէն:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.— Ի թիւն 1829, էն ժամանակն, որ կարգվեցինք, ի նուստ Տէր Մինաս Տէր Սարգիսեան: Այս թիւն է 1829, մեր ասկն շատ նեղութեան մեջ ին, սուրբ խաչիւս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց եւ կեցուցէ շնորհիւ ողորմութեամբ իւր, ամէն: Պահպանիւս զմեզ եւ ծառայս քոյ Քրիստոս Աստուած մեր, ընդ հովանեաւ սուրբ եւ պատվական խաչի քո ի խաղաղութեան, փրկեալ յերեւելի եւ աներեւոյթ թշնամուն: Արժանաւորեալ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ հօր եւ ընդ սրբոյ հոգւոյդ, այժմ...:

Թ. 244բ.—245բ.—Վերջին ստացող սուրբ անտարանիս, զհաւաքա Ղալամն եւ զծնաւդսն իւր՝ Սաւթանն, Մարիբայն եւ զկողակիցն իւր՝ Մերտատիկն եւ որդին իւր՝ Գրիգորն եւ դուստրն իւր՝ Թլէնփաշէն եւ եղբարքն իւր՝ Փիրնազարն, Մարգարէն, Յակոբն, եղբարորդին՝ Թեղանն, Աւետիսն, ամէն: Դարձեալ լիցեցէ ի Քրիստոս զհօջա Ղալամն, որ ստացաւ զսա ի հալալ յընչից իւրոց, եւ ի արդար վաստակոց իւրոց յիշատակ իւրն եւ ծնաւդաց իւրոց եւ ամենայն արեան մերձատրացն, ամէն: Թուականին Ռեհն (1596): (Կ)ազմեցաւ ձեռամբ Տէր Յովհաննէս աբեղային եւ Ընթստակէս անարժանին ամէն:

Թ. 245բ.— Դարձեալ յիշեցէք նպարտն Ընկիբէկին եւ կողակից՝ Մաղիկին եւ որդին՝ Ասատուրին որ փոխեցաւ ի Քրիստոս:

Դարձեալ յիշեցէք ի մաքրաշփալ փրկագործութեան խորհուրդ ամենօրհնեալն եւ հոգիացեալն ի վարս ամենայն առաքինութեան, աստուածասէր եւ իմաստուն տանուտէրն՝ հօջայ պարտն Նաւաթարքին եւ կողակիցն՝ զԱնիկին: Եւ ստացան զանառիկ մեծութիւնս եւ զփարթամ հարստութիւնս, զպայծառութիւնս եւ զուրախութիւնս մանկաց եկեղեցու զտէրունեան անտայբեր սուրբ անտարան Քրիստոսի, յիշատակ բարի հոգոյ իւրոց, եւ լի բերանով եւ ուղիղ սրտով Աստուած ողորմի ասացէք: Եւ Քրիստոս Աստուած, որ առատն է ի տուրս, բարեբար եղեւ մեզ, տացէ զիւր առատ ողորմութիւն եւ զերկնից արքայութիւն, ամէն:

Դարձեալ յիշեցէք հեղաշոգի ի մաքրաշփալ հօջայ պարտն Նաւաթարքին եւ կողակիցն՝ խոնարհ եւ հեղաշոգի զԱնիկին եւ ուր որդին՝ Դաւութին եւ եղբարն Ավդալին եւ Աւետին, եւ լի բերանով եւ ուղիղ սրտիւ աստուած ողորմի ասացէք, ամէն:

Դարձեալ յիշեցէք ի մաքրաշփալ պարտն Նաւաթարքին եւ ուր կողակից զԱնիկին եւ եղբարն ուր հեղաշոգի պարտն Մարգարին եւ կողակից իւր Ումպարն եւ որդին իւր Մնացական, ամէն: Դարձեալ յիշեցէք փրկագործութիւն խօջայ պարտն Նաւաթարքին եւ կողակից զԱնիկին եւ որդին ուր Դաւութին եւ եղբարն Աւդալին եւ Աւետին եւ հարսն իւր Տայգուր եւ Դաստաշգուլին, եւ լի բերանով եւ ուղիղ սրտիւ Աստուած ողորմի ասէք, ամէն:

Դարձեալ յիշեցէք Մնացականի որդեանցն՝ Մակարին եւ կողակիցն նորա Օվսանին եւ Կիրակոսին եւ խուտաբաղչին եւ էլիաղին, Աստուած ողորմի ասացէք: Քրիստոս Աստուածն ձեզ ողորմի, ամէն:

Դարձեալ յիշեցէք Մակարի որդի Մատուրին եւ դստերն նորին Օղիտին եւ Սառանին եւ Թամամին: Դարձեալ յիշեցէք Կիրակոսի որդի Մինասին եւ Աւետին եւ դստերն նորա Շամամին: Դարձեալ յիշեցէք խուտաբաղչի որդի Առաքելին, կողակիցն նորա Այնաուն եւ նորա որդեանց Ավիէլին եւ Մարգարին եւ Գրիգորին, Աստուած ողորմի ասացէք, ամէն:

Դարձեալ յիշեցէք Մատուրին եւ կողակիցն նորա Փէրուն եւ նորան որդեանցն՝ Շամիրդին եւ Շարուղին, եւ կարգացող Մկրտումին եւ Նազարին: Ով որ մեզ յիշի, յիշեալ լինի առաջի Քրիստոսի Աստուծոյ մերոյ, ամէն:

Դարձեալ յիշեցէք Մատուրի որդի խոնարհ եւ հեղ Շամիրդին եւ կողակիցն նորա Հոռօսիմին եւ նորան որդիքն՝ Սարգիսին եւ դստերն նորա Խանդատին եւ Բէկդատին: Դարձեալ յիշեցէք Շաբաղին եւ կողակիցն նորա Շիրինին եւ նորանց որդին Գուլատին: Դարձեալ յիշեցէք անպիտան կարգացող Մկրտումին եւ կողակիցն նորա Նարգիզին եւ նորան դստերն որդուն Մարիամին, ամէն: Եւ լի բերանով Աստուած ողորմի ասացէք, Աստուած ձեզ եւ մեզ ողորմի իւր արքայութեան, ամէն:

Թուին 1843-ին գեկտեմբերի 20-ին:

Թ. 245բ.— Քրիստոսի ծառայ Տէր Մկրտիճս, էս Բ (2) տողս գրեցի, ով որ ընթեռնու, մեղաւորին մին բերան ողորմի ապ, Աստուած իւր հոգոյն ողորմի, Աստուած եւ իւրն փրկէ:

Դարձեալ յիշէք Շահաբաղի որդէկիր Մարգարին եւ նորա որդոյն Սիմէոնին, Շահմիրդի որդի Սարգիսն եւ կողակիցն Մարիամն, եղբայրն Մարուքն, դստերն Գայիանէն, Տէր Մկրտչի որդի Մատուրն եւ Թորոսն եւ Ավիելի որդին՝ Պետրոսն:

№ 28

ԱԻԵՏԱՐԱՆ

Թերթեր՝ 276:— Պրակնէր՝ 23, յուրաբանչուրը 12 թերթից:— Մեծութիւնը՝ 21×15×5:— Նյութը՝ սպիտակ թուղթ:— Կազմը՝ արծաթապատ տախտակ: Առաջին երեսի վրա բեռնեցող փակցված է մեկ արծաթյա խաչ եւ չորս անկյունազարդ: Կազմն ունի երկու արծաթյա բռնակ:— Վիճակը՝ բավարար:— Գրութիւնը՝ երկայնու:— Տողերը՝ 22:— Գիրք բոլորգիր:— Զարգագրութիւն՝ կան չորս ավետարանիչների նկարները, թռչնազրեր, կենդանազրեր, բիշ թվով նաև՝ մարդազրեր, լուսանցազարդութիւններ:

կիսախորաններու — ժամանակը՝ 1686 — Գրիշը՝ Ազարիա — Գրչուրյան վայրը՝ Սպահան — Պատվիրատուն՝ Շահնազար:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 215ա. — Զմեղաւոր Ազարիայ, գծողս յիշեցէք ի Քրիստոս: Թվին ՌՃԼԵ (1686) գրեցի:

Թ. 273բ.—275ա. — Փառք... որոյ ամենաւատ շնորհին կատարեցաւ սուրբ աւետարանս ի թուականին մերոյ ՌՃԼԵ (1686), յաշխարհի պաշտից արքայանիստ քաղաքիս ըստ գրոց Շօշ կոչեցելոյ, որ այժմ Ասպան արտաձայնի, ի գեօղաքաղաքիս Զուղայու, ընդ հովանեաւ սուրբ Բեթղէհէմի, ի դիտապետութեան հայոց հանուրց սեփից Տեառն Եղիազարու: Եւ անձամբ յոգնամեղ զնաքեաւորամագծացս ծրօղ, որ ի վերջնումս զապիկար, սուտանումս Ազարիայի՝ անուամբ եւեթ եւ արեամբ սին եւ զրահեա: Մաղթեմ յիշատակել ի միտս բարիս, ո՛վ սուրբք վերծանողք, հարք եւ եղբարք իմ, անմեղադիր լեռուք խոշոր գրոյս, զի կարն մեր այս եւ ոչ աւելի գիտեմ: Եթէ սղալ ինչ գտցի ի ամաբառնայք վասն սիրոյն Քրիստոսի: Եւ յիշեալիք զմեղաւոր Ազարիայս, եւ ամենայն ընդանեօքն իմ, եւ դուք ընկալիք մասն ի բարի ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, ամէն:

Եւ արդ՝ աղաչեմ հանդիպողացդ եւ կարդացողացդ, յիշեալիք ի սուրբ յաղօթս ձեր զըստացող սուրբ աւետարանիս՝ զբարեմիտ եւ աստուածասէր եւ երկիւղած յԱստուծոյ, զՇահնազարն, որ ստացաւ ի հալալ վաստակոց իւրոց, յիշատակ իւրն եւ իւր ծնողացն՝ զհօրն Յովանիսին, եւ զմօրն իւրոյ Խանէ(ին), եւ կողակցին իւրոյ՝ Անայէ(ին) եւ որդոցն՝ Մխիթարին, եւ հանգուցեալ Յովանիսին եւ զմիւս Յովանիսին եւ դստերացն՝ Սանամին, Մարիամին եւ Թուխծամին եւ հանգուցեալ Հեղինարին:

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոսին զՇահնազարն եւ զեղբարքն իւր՝ Ապով(ին), Գրիգորին, Աւետիսին, եւ զքոյրն Փէրիխան:

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս Ապովն եւ զկողակիցն Եղնումն, եւ զորդիքն՝ Գալուստն, Յովհաննէսն, հանգուցեալ Վարդանէսն, Եղիկն, եւ զդստերքն խանին՝ Թազագուլն:

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զԳրիգորն եւ զկողակիցն՝ հանգուցեալ Անային, եւ զմիւս կողակիցն՝ Յուսնիխանն, եւ հանգուցեալ որդին՝ Ահարոնն եւ զդուստրն՝ Մարգարիտն:

Դարձեալ յիշեցէք զԱւետիսն եւ ըզկողակիցն՝ Մարգարիտն:

Դարձեալ յիշեցէք Աղայու տանուտէր Յովանէսն, եւ զծնողսն իւր՝ Աւետիսն, զՊէկիխանն, եւ զեղբարն՝ Աստուածատուրն, եւ

զքորքն՝ Հեղինարն, Խան Սօլթանն, Մարգարիտն:

Գրեցաւ սուրբ աւետարանս ի թագաւորութեան Շահսլեմին եւ ի քալանթարութեան:

Դարձեալ յիշեցէք զսրբազան քահանայքն՝ զՏէր Պօղոսն եւ զՏէր Ստեփաննոսն, եւ զՏէր Յովաննէսն, որք եղեն պատճառ սուրբ աւետարանիս: Աստուած ընդ ԻԴ (24) սուրբ քահանայիցն, որք կան, սուրբ աթոռովն շուրջ Քրիստոսի դասեցէ, ամէն:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 273ա. — Այս աւետարանս Տէր Անդրէասի որդոցն ըստացայ իմ հալալ վաստակիցն, դարձեալ կրկին ընծայեցի Ազնվուլայ Եկեղեցւոյն Աղաջան Յովսէփեան: Ով որ հանդիպի, կարդալով, ինձի յիշէք, եւ դուք յիշեալ լինիցիք ի Քրիստոս:

Թ. 275ա. — Դարձեալ յիշեցէք զՏէր Զաքարէն եւ զկողակից Մարամ տատիկն, եւ ըզհանգուցեալ զորդին իւր՝ Յովաննէսն, եւ ըզհանգուցեալ Եփրայն իմ՝ Փանոսն եւ ըզորդին իւր Յարութիւնն եւ եղբարն իմ՝ Պարսամըն, եւ ըզկողակիցն իւր՝ Մարամըն եւ զորդիսըն իւր՝ Գտուրիկըն: Եղեւ թվին ՌՃՀԴ-ումն (1725), առայ սուրբ աւետարանըս:

(Երեք տող անընթեռնելի):

Թ. 275ա. — Դարձեալ յիշեցէք զվերջին յիշատակն սուրբ աւետարանիս զԱստուածայտուրն, եւ զկողակիցն ուր՝ Եփրայն եւ որդիքն իւր՝ Ինչիլն եւ դուստ(ր)ն՝ Մարգա(ր)տիկն եւ զեղբարքն՝ Սիմոնն եւ զԹուրոսն, կողակից Շուշանն, եւ դստեր(ք)ն՝ Թեկղին եւ Մարինոսն: Գրեցաւ թիվն փոքր ՌՃԼԷ (1688) ի մերայնումն վերջ:

Թ. 275բ. — Նորընծա(յ) Տէր Անդր(է)աս լալագին, թվին ՌՄՂԶ (1847) հոկտեմբերի 6:

Ես Խաչիկի որդի Մէլիքնազը գրեցի, ո՛վ որ հանդիպի զայս մին քանի գալամէ կարդայ արեւո ռդորմի յիշեցէք յիշեալ լիցի Աստուծոյ այնդ ատենին. գրեցի Զեռս զնայ գործս մնայ: Սա գրվեցաւ թվին փոքր ՌՃՅԵԲ ... Ե.ումն: Վերջ:

Թ. 276ա. — Առա աւետարան Տէր Գրիգորն, Տէր Գրիգորի որդին Մարկոսն, կողակից Թամամն, Աւետի կողակից Դիշխոյն, որդին Խուտայբաշխն, Սանամն, որ Մաթասնի կողակից՝ Գուլնաբարն, Յակոբն, միյոյս յաղբէրն՝ Գալուստան, կողակիցն Եղսայրեթն, Արութիւն, միյոյս աղբէրն Յովանէսն, կողակիցն՝ Նուպարն, որդին՝ Յուսէրն, Մուրատն, Սահակն, դու(ստե)րսն՝ Անային, Թամամն եւ միյոյս աղբէրն՝ Գրիգորն, կողակիցն՝ Մարամն, որդին Յաբրհամն:

Յիշատակ է, այս է աւետարանս Յովանէսի որդին Յուսէփ, եղբար նորայ Մուրատին եւ միւս եղբար Սահակին եւ Յուսէփին, կողակիցն Մալքիւնազն, որդին նորայ Վարթանն եւ Ղազարն, Իսային եւ միյուս եղբարն Ապրհամն եւ Մարգարն, Առայրեթն, մեծաց եւ փոքրոց, ամէն: Ես մեղայոր անարժան անունիւ Մէլիքս գրեցի:

Ազնաուլայ չապովհիցն յետ գրեցաւ Տէր Առաքելնս թիւն ՌՄՆ (1600):

№ 29

ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթեր՝ 257:— Պրակներ՝ 22, յուրաքանչյուրը 12 թերթից— Մեծութունը՝ $21 \times 16 \times 7$ սմ.:— Նյութը՝ սովորական դեղնագույն թուղթ:— Կազմը՝ կաշեպատ տախտակ, թավշյա ծածկոցով:— Վիճակը՝ լավ:— Գրությունը՝ երկսյուն:— Տողեր՝ 21:— Գիրը՝ բոլորգիր:— Զարգացրություն՝ ունի կիսախորաններ, շորս ավետարանիչների նկարները և լուսանցազարդեր:— Գրիչը՝ վարդան արեղա:— Գրչության ժամանակը՝ (1488 թ.):— Գրչության վայրը՝ Հաղբատ:— Պատվիրատուն՝ Խոնթխաթուն:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 253ա.— Փառք... Յուսով եւ հաւատով եւ սիրով եւ գրել զսուրբ աւետարանս հաւատարիմ եւ բարեպաշտն աստուածասէր եւ երկիրաժ կինն Խոնթխաթուն: Եւ ստացաւ զսայ ի հալալ վաստակոց իւրոց, յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց՝ հօրն՝ Զանբաղլին, եւ մօրն՝ Ազիզադէլիքին, եւ հանգուցեալ եղբօրն՝ Յովանէս քահանային, որ տղայ տիօք փոխեցաւ առ Աստուած, եւ սուք մեծ եթող ծնողաց իւրոց: Եւ այլ եղբարցն՝ Մկրտչին եւ Մարտիրոս իրիցին, եւ եղբօրն՝ Բարսեղին եւ Ղազարին, եւ հօրեղբօրն՝ Սիմէոնին եւ որդոյն՝ Դուկասին, եւ ամենայն ազգականաց իւրոց՝ կենդանեաց եւ հանգուցելոց, զոր Տէր Աստուած վայելել տացէ կենդանեացն եւ յիշատակ բարի հոգոյ իւրոյ եւ հանգուցելոցն, ամէն:

Արդ՝ գրեցաւ սուրբ աւետարանս ի թվականիս հայոց ԶԼԷ (1488), ի գաւառս Լօռոյ, ի յերկնայհանգէտ եւ ի գերայհոշակ սուրբ ուխտս Հաղբատ, ընդ հովանեաւ սուրբ կաթողիկիս, եւ սուրբ Աստուածածնի եւ սուրբ Առաքելոցս, ձեռամբ փծուն եւ անարհեստ գրչի՝ վարդան արեղայի, որ անուամբս միայն եւ գործովս ոչ: Որք հանդիպիք, յիշեցէք ի Քրիստոս զիս եւ զծնողն իմ:

Ես Խոնդխաթունս ստացայ զսա յիշատակինձ եւ կենակցին Դովաթիարին, եւ ծնողաց իւրոց՝ հօրն Յարազիզին, եւ մօրն Յեսանխաթունին, եւ եղբօրն՝ Շանշին, եւ կնոջ նորին՝ Շահիսլիմին, եւ զաւակացն՝ Դաւթին եւ Յակոբին, եւ հանգուցեալ եղբարց Յակոբին, Շահուելին, եւ քրերացն՝ Սառային եւ Գուլփաշին եւ Յաճապնուշին, եւ ծնողաց իմոց՝ Զանբաղլին եւ Ազիզադէլիքին, եւ եղբարցն իմոց՝ Մկրտչին, կենակցին՝ Խոսրովիքըլթին, եւ զաւակացն՝ Մուրատբաղլին եւ Մարտիրոս քահանային, եւ կենակցին՝ Խաթունջանին եւ զաւակացն նորայ բողբոջ Յովանիսին, եւ ամենայն արեան մերձաւորաց՝ կենդանեաց եւ հանգուցելոց:

Արդ՝ աղաչեմ զամենեւեանդ, որք հանդի-

պիք սմայ, կարդալով կամ լսելով ի լուսատու բանիցս, կամ օրինակելով, յիշեցէք ի մաքրայփայլ յաղօթս ձեր զԽոնդխաթուն եւ զիւրան ամենայն եւ զվերագրեալս ի սմա: Ե յօժար կամաց, եւ ի խորոց սրտէ միով տէր ողորմեայիւ արժանի առնել եւ յիշել ի ժամ աղօթից, եւ Աստուած զձեզ յիշէ, ամէն:

Դարձեալ, ես՝ Խոնդխաթունս, տվի ի յօժար կամօք գիշատակս իմ զսուրբ աւետարանս իմ եղբօրորդոյն՝ Մարտիրոս նորրնձայ քահանային, զոր Տէր Աստուած վայելել տացէ իւրեն եւ զաւակաց նորին:

Սի՛ որ յիշխեսցէ զսայ հանել կամ յիմոց եւ կամ ի յօտարաց: Սթէ որ յանդգնի՝ պատ-

Սղաչեմ յիշել ի Տէր զբազմամեղ նկարողս եւ զկազմողս, հանդերձ բազմերախտ ծնողօք իմովք: Բնքն՝ որ առատ է ի տուրս բարեաց, ձեզ յիշողացդ եւ մեզ յիշեցելոցս ողորմեացի Քրիստոս Աստուած եւ նմայ փառք յաւիտեանս, ամէն: Հայր մեր...:

Կնդ նմին՝ (յիշեցէք) զՎաղթանկն, որ կողին աշխատեցաւ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 255 ա.— Որ ողորմի Տէրն ամենայնի, Հոգոյ սորայ վերջին

Ստացողի՝ տանուտէր Ամիրին,
Եւ ընտանեաց իւր՝ Փարիխանին,
Եւ միայմօր որդին

Իւր՝ Ասլանմազ խիստ նազելին,
Եւ որդի Ասլանմազին,

Նորայթոխքոյ տղայ մանուկ Նազարին:

Սայ է յիշատակ անշնչելի,

Որ ի զաւակ հոգոց նոցին:

Յորժամ որ գայ Տէրն յերկնային,

Յանձառ փառաց իւր հայրեն(ին),

Նստի յաթոռ դատաստանին,

Տիւան առնէ մարդկան ազգին,

Յայնժամ աչքն բաղցրագին,

Հայի սիրով ի վերայ սոցին,

Եւ բարբառովն աստուածային,

Գոչէ ի վեր ըստ հաւտայտեան:

Եւ անարժան կազմող սմին,

Ձեզ կաղաչեմ ողորմագին,

Որ զիս առնէք յիշման արժան,

Եւ ձեզ օրհնէ անմահ արքայն:

Որ կազմեցաւ հայոց թվին ՌԶԹ (1640 թ.), ամէն:

Թ. 256.— Փառք ամենասուրբ երրորդութեանն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ամէն: Արդ՝ նորոգող սուրբ աւետարանիս... Զուրապս...

Ո՛վ սուրբ ընդերձողք, յորժամ հանդիպէք սմայ՝ կարդալով կամ օրինակելով, լի բերան ողորմի եւ հայր մեղայիւ յիշեցէ՛ք, Քրիստոս Աստուածըն ձեզ յիշէ իւր միւս անգամ դալստեանն, ամէն: Որ վերստին նորոգել եւ արժաթել տուի սուրբ աւետարանս վասն փրկութեան հոգւոյ իմոյ, նորոգել թվիս հայոց

ՌՃՄԱ (1702)։ Որ է վախճ սուրբ նշանիս, որ անուն կոչի նիկողայոս։ Ի Հայրապետութեան Տեառն նահապետ կաթողիկոսի հայոց։

Թ. 257ա.— Հայս սուրբ աւետարանս ի ... թուին հայոց 1289 մինչ ամ տարոյ է ի 1840 թ.։

№ 30

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Թերթեր՝ 322։— Պրակներ՝ 25, յուրաքանչյուրը 12 թերթից (ԺԲ, ԺԳ, ԻԳ, ԻԵ սլրակներ՝ 16 թերթից)։— Մեծուքյունը՝ $21 \times 15 \times 7,5$ սմ.։— Նյութը՝ հասարակ դեղնած թուղթ։— Կազմը՝ կաշեպատ տախտակ, որի վրա փակցված է խաչ։— Պահպանակ՝ սկզբում և վերջում մեկական թերթ մագաղաթ, հին վրացերեն գրով։— Վիճակը՝ բավարար։— Գրությունը՝ երկսյուն։— Տողեր՝ 20։— Գիրը՝ բոլորգիր։— Զարդագրություն՝ կան շորս խորաններ, ավետարանիչների նկարներով, կիսախորաններ և բազմաթիվ լուսանցազարդություններ։— Գրիչը՝ Ստեփանոս քահանայ։— Ժամանակը՝ Ժէ դար։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 320ա—321ա.— Փառք եռահիսակ եւ եռանձնեայ միայրուն եւ համագոյ սուրբ երրորդութեան յափտեանս ամէն... Ով սրբազան անձինք Աստուածայգեացք, յորժամ հանդիպիք այսմ աստուածունակ եւ փրկական աւետարտ հրամանացս տեառն, յիշեցէք ի մաքրաշիայլ յաղաթս ձեր զեղկելի ծրիշս եւ Ստեպանոս եւ ոչ զանուն իմ եւ ոչ զգործս անուամբ միայն քահանայ։ Յերես անկեալ աղաչեմ զամենեւեան զՔրիստոսասիրաց անձինս, յիշել առաջի կենարարին Քրիստոսի զիս եւ զփոխեցեալն ի Քրիստոս՝ զհայրն իմ զԱկոր եւ զմայրն իմ զԱզիզն, որ այսմ ամի փոխեցան ի Քրիստոս։ Աղաչեմ վասն սիրոյն Քրիստոսի՝ լի բերանով ասել զԱստուած ողորմին եւ զամէնն, զի եւ դուք բնկալչիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, ամէն, եւ Աստուած ձեզ յիշէ իւր արքայութիւն, ամէն, ամէն, եղիցի, եղիցի։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 2ա.— Զվերջին ըստացող սուրբ աւետարանիս յիշեցէք, ո՛վ պատուական հարք եւ եղբարք, զը...ցըղնցի Միրզէն եւ զկողակիցն իւր Շուշանն, եւ զորդիսն իւրոց զԲաղդամն եւ զդստերքն իւրոց զՂատամ խուժիւն եւ զՄարասն եւ զԽարասն եւ զամենայն արեան մերձաւորսն յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք։

Դարձեալ յիշեցէք զՏէր նիկողայոսն, որ ԻԴ (24) ամաց մանուկ տեօք փոխեցաւ առ Քրիստոս, յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք, եւ բարեբարն Աստուած զյիշողսդ եւ զյիշեցեալսն ի միւս անգամ զալստեանն արժանի արասցէ իւր յարքայութեանն, ամէն։

Հայր մեր...

Գրեցաւ ի թուին ՌՃԶ ամին (1657 թ.) ի փառս Քրիստոսի։

Դարձեալ յիշեցէք զՏէր Արրահամն եւ զհայրն իւր՝ Մինասն եւ զուր ծնող Մարեամն եւ զկենայկիցն ուր՝ Օղիդէն եւ զորդին իւր՝ Քօշարն, զզօքանչն իւր Գուգադն։ Ով օր հանդիպի կարդայ, զիս յիշէ, յինքն յիշեալ լինի առաջի Աստուծոյ։ Գրվեցաւ ի թուին ՌԹՃԼԶ (1787 թ.) մարտի Ժ-ումն (10-ին)։

Թ. 244ա.— Թուիս ՌՃՀԳ-ումն (1724 թ.) ես մեղաւոր խաչիկս գրեցի, օվ օր կարդայ՝ մին բերան ողորմի տայ, ամէն։

Թ. 316ա.— Աստուած ողորմի ասին Գալուստին հոգոյս։

Թ. 321ա.— Յիշատակ է սուրբ աւետարան Մերզին։

Թ. 321բ.— Սուրբ աւետարանիս ծառայ Մարգար սուտանումն Պաղալի, թուին ՌՃԻԷ (1678 թ.)։

№ 31

Մ Ա Շ Տ Ո Յ

Թերթեր՝ 242։— Պրակներ՝ 20, յուրաքանչյուրը 12 թերթից։— Մեծուքյունը՝ $18 \times 14 \times 6,5$ սմ.։— Նյութը՝ դեղնած հաստ թուղթ։— Կազմը՝ կաշեպատ տախտակ։— Վիճակը՝ բավարար։— Գիրը՝ բոլորգիր։— Գրությունը՝ միասյուն։— Գրիչը՝ Կարապետ արեղայ։— Պատվիրատուն՝ Քիչի խաթուն։— Ժամանակը՝ 1450 թ.։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 20բ.— Ո՛հ զայս ոչինչ տունս, դեռ չէ եկել, ինչ կու կաթի։

Թ. 48բ.—49ա.—

Ո՛վ Տէր Յիսուս արդար բարի

եւ Աստուած ամենայնի,

Որ ջրով սրբես զմարդիկ յերկրի,

Զհոգիս մաքրես անարժանի,

Որ Կարապետ անուն կոչի։

Թ. 101բ—102ա.— Ո՛հ, ո՛հ, զայս ոչինչ տունս, զինչ յերդէն կու անկանի, թո՛ւ ի գիրս եւ ապականէ։

Թ. 144բ.— Զեղկելիս եւ զանարժան գրիշս յիշեցէք. եւ զպատուական կիսն՝ զՔիչի խաթունն, զստացող գրոցս, աղաչեմ յիշել ի Քրիստոս, եւ ինքն՝ ամէնառատն Աստուած ձեզ ողորմեսցի կարգացողաց եւ լսողացդ յիւր միւս անգամ զալստեանն, ամէն, ամէն, եղիցի։

Թ. 211բ.— Փառք... Գրեցաւ սուրբ տառս աստուածային յորջորջեալ ցուցակ, արարուած սուրբ հարն Մաշդոցի։ Ի թուականիս հայոց ՊՂԹ (1450 թ.) ձեռամբ յոգնամեղ եւ անարժան եւ պարտաւոր գրչի սուտանուն Կարապետ արեղայի, շարեալ լցեալ եմ յաշխարհի։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 81բ.— Զաքարայ ծառայ Աստուծոյ:

Թ. 124բ.— Սուրբ մաշտոցն յիշատակ է Գնաթա-
րացի լուսայհոգի Ղուկասի որդիք Սուրբիազն եւ Թո-
մասն առանք մեր հալալ վաստակիցն, որ մոնշով ի-
լրդայ շոմենայ: Թուին ՌՄԵԸ-ին (1799 թ.):

№ 32

Մ Ա Շ Տ Ո Յ

Թերթեր՝ 180:— Պրակներ՝ 23, յուրաքանչյուրը 8
թերթից:— Մեծուրյունը՝ $18,5 \times 11,5 \times 4$ սմ.:— Նյութը՝
դիմացկուն թուղթ, տեղ տեղ դեղնագույն:— Կազմը՝
կաշեպատ տախտակ:— Վիճակը՝ բավարար, միայն 4
թերթ պակասում է ԺԳ պրակից:— Գիրը՝ բոլորգիր:—
Գրությունը՝ միասյուն:— Տողերը՝ մեծ մասը 23, եր-
բմեմ միայն 21 կամ 22:— Զարդագրություն՝ կա մի
կիսախորան եւ մի բանի թռչնագրեր միայն գլխատա-
ռերի տեղ:— Գրիչը՝ Տեր Հովհաննես քահանայ:— Ժա-
մանակը՝ 1836 թ.:— Տեղը՝ Բոլորան գյուղ:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 180բ.— Գրեցաւ մաշտոց Բոլորան թիւն
ՌՄՁԵ (1836 թ.), ձեռամբ անարթուն Տէր Ո-
վանէսին եւ պապս իմ Տէր Մովսէսն, հայրս
իմ Նաւասարդն, որ գնաց Սուրբ Երուսաղէմ,
եւ որդիքն Տէր Մինասն, Մկրտիչն, Սիմոնն,
Թոռունքս իմ Աւետն, Յակոբն, Կարապետն,
Օհանն, Վարդանն, Մուսէսն, Գրիգորն, կողա-
կիցն իմ Վարթէրն, եւ իմ հոգեւոր հարքս Տէր
Աղէքսանդրն եւ Տէր Ստեփանոսն, Տէր Աս-
տուած իրեանց վարձահատուց արասցէ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 25բ.— Զայս մաշտոցս Տէր Յովհաննէսին շի-
նացն ա:

Թ. 36բ.— Թիվն ՌՄՂԵԻՆ (1846 թ.) Տէր Ովանէս
վախճանեցաւ: Զայս մաշտոցըն յուր ձեռայգործն ալ:

Թ. 46բ.— Որ. Աստուած ի պագն հանցեալ միջուս
շաբաթ օր օրհնես:

Յիսուսի Քրիստոսի ծառայն անարժան նորընծայ
..... 1295ին:

Ով որ մին բերան յիշի, յինքն յիշեալ լիցի առաջի
Աստուծոյ, ամէն:

Թ. 62բ.— Զայս մաշտոցս կը պատկանէ Տէր Յո-
հաննէսին: Էր թիվն ՌՄՂԵԻՆ (1846 թ.):

Թ. 91բ.— Թօվմաս Տէր Յովանէսեան, որ վաղճա-
նանեցաւ էր թիվն ՌՄՂԵԻՆ (1846 թ.):

Թ. 97բ.— Ես անարժան նորընծայ Տէր Անդրիասս
Յուսէփեան թուին ամի Տեառն 1846, հայոց՝ 1295,
տաճկաց՝ 1261:

Թ. 135բ.— Յիշատակ է զայս մաշտոցս Տէր Կա-
րապետ Տէր Մինասեան եւ իմ ամուսին Գուգուլն եւ
քաղցրիկ Մինասն եւ հանգուցեալ մայրս Դօլվաթն
տուտուին, մեր Գուգուեան Նարկիզն, Թամամն, Յօվ-
սանէն, Դօլվաթն, Մարիամն, 1864ին:

№ 33

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Թերթեր՝ 232:— Պրակներ՝ 27:— Մեծուրյունը՝
 $17 \times 11,5 \times 4,8$ սմ.:— Նյութը՝ դեղնագույն թուղթ:—
Կազմը՝ թավշապատ տախտակ: Առջեի կողքի վրա
փակցված են շրջանակավոր արժաթյա զարդանկարներ,
մեջտեղում փորագրված է արժաթյա խաչ: Վերջի կող-
քի վրա՝ Աստվածածնի եւ Հիսուսի արժաթյա նկարը,
շրջանակավոր արժաթյա զարդանկարներով:— Վիճակը՝
բավարար, բայց վերջից կան պակաս թերթեր:—
Գրությունը՝ երկսյուն:— Տողերը՝ 27:— Գծումները՝
ճշումով:— Գիրը՝ բոլորգիր:— Զարդագրություն՝
ունի կիսախորաններ, լուսանցազարդություններ, ծաղ-
կագրեր, մարդագրեր, կենդանագրեր, թռչնագրեր եւ
չորս ավետարանիչների նկարները:— Գրիչը՝ Գայուստ:
— Կազմողները՝ Սարգիս եւ Հովհաննէս:— Ժամանակը՝
1648 թ.:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 62բ.— Քրիստոս Աստուած, որ մարմ-
նացար ի սուրբ կուսէն Մարիամայ, ողոր-
մութիւն եւ արքայութիւն շնորհեա մեղապարտ
գրչիս Գալստի, ամէն:

Թ. 63ա.— Ով եղբայր ընթերցող, աղաչեմ
զձեզ վասն սիրոյն Քրիստոսի Աստուծոյ, ո-
ղորմի ասէք սուտանուն կր(օ)նաւոր Գա-
լու(ս)տի, զի յոյժ կարօտեմ ողորմութեան
Աստուծոյ: Թերեւս ողորմեսցի բարեխօսու-
թեամբ իւր ծնողին՝ անառակ ծառայիս, ա-
մէն:

Թ. 102բ.— Յիշեա զմեղաւոր գրիչս, ով
սուրբ ընթերցող, եւ դու յիշեալ լինիս Քրիս-
տոսի, ամէն: Թվիս ՌՂԷ (1648 թ.):

Թ. 165ա.— Ով սուրբ աւետարանիչ Ղու-
կաս, բարեխօսեա զմեղաւոր գծողս եւ
զծնողսն իմ առաջի Քրիստոսի:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 232ա.— Յիշատակ է Արաեան յավէտարանն եւ
Տէր Առայքելի կողակիցն Նաշխուն, եւ որդին Ասալ-
տուն, Օվանէսն, Աղէքսանդրն, դուստրն՝ Յերիզար(ն),
Նգարան, մեղաւորէս գրիճն Օվանէսն: Թվին ՌԲՃԿԷ
(1818 թ.) յունվարի Ի-ին (20-ին):

№ 34

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Թերթեր՝ 270:— Պրակներ՝ 21, յուրաքանչյուրը
12 թերթից:— Մեծուրյունը՝ $20 \times 15 \times 4,5$ սմ.:— Նյութը՝
դիմացկուն հաստ թուղթ:— Կազմը՝ կաշեպատ տախ-
տակ:— Գիրը՝ բոլորգիր:— Գրությունը՝ երկսյուն:—
Տողերը՝ 21:— Զարդագրություն՝ կիսախորաններ, ա-
վետարանիչների նկարները եւ լուսանցազարդություն-
ներ:— Վայրը՝ երկիրն Մոկաց:— Ժամանակը՝ 1658
թ.:— Պատվիրատուն՝ Տեր Վարդան:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 134բ. — Թուին ՌՃԷ (1658 թ.) ամին գրեցաւ սուրբ աւետարանս յերկիրն Մոկաց: ԲՃԷ (սխալմամբ բաց է թողնված թվականի առաջին Ռ (հազարավոր) տառը):

Թ. 269ա. — Ի յառաջնորդութիւն աստուածապահք քաղաքիս Զաքարիա քաջ եւ քրտ(ն)աջան աշխատող ի վերայ յարինաց եւ խրատիչ ախմարաց եւ թիւրից, զոր Տէր Աստուած ընդ երկայն աւուրս պահեսցէ, ամէն: Դարձեալ աղաչէմ ըզձեզ, ո՛վ ընթերձաւդ, յիշեցէք. ձեզ յիշեցելոցդ եւ մեզ յիշողացդ տացցէ Քրիստոս Աստուած զխոստացեալ պարգեւքն...

Դարձեալ յիշեցէք ի սուրբ յաղաթս ձեր, որ ըստացան իւր հալալ ընչից եւ յետ յիշատակ ըսուրբ յաւետարանս ի ձեռն Տէր Վարդանին եւ իւր տղին եւ զոր Տէր Աստուած բնգունելի արասցէ զյիշատակս նոցա եւ եղիցի ամենայն թողութիւն, ամէն: Դարձեալ յիշեցէք ի սուրբ յաղաթս ձեր Աղշարհցին Դաշտէն, ալամանցի Մելիքոնն, եւ իւր զհայրն՝ զԽաչիկն, եւ զմայրն՝ Թուրվանտանն, եւ զկողակիցն՝ զՄայրամն ուռուսն, հարն՝ Հումային, մարն՝ Հասնային, եւ զեղբարն՝ զԱստուածատուրն եւ զքորն՝ Փաշեկանն:

№ 35

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Թերթեր՝ 245: — Պրակներ՝ 20, յուրաքանչյուրը 12 թերթից, հետագայում մի պրակ եւ ավելացել է սկզբում (9 թերթից): — Մեծութունը՝ $22 \times 16 \times 5,5$ սմ.: — Նյութը՝ դիմացկուն հաստ թուղթ, դեղնագույն: — Կազմը՝ կաշեպատ կարտոն, վերջերս կազմը վաժ: — Պահպանակ՝ մի թերթ ձեռագիր մագաղաթ սկզբում եւ մի ուրիշ վերջում, տոմարական բովանդակութեամբ: — Վիճակը՝ բավարար, կան դատարկ թղթեր: — Դիրք՝ բուրգի: — Դուրքունը՝ երկայուն: — Տողեր՝ 24: — Զարդագրութուն՝ կան խորաններ, կիսախորաններ, ավետարանիչների նկարները, բազմաթիվ լուսանցազարդութիւններ, երկրաչափական սիմետրիկ զարդարանքներ, թռչնագրեր եւ ծաղկագրեր: — Դրիշը՝ Դավիթ եպիսկոպոս: — Պատվիրատուն՝ Սարուբեկ: — Ժամանակը՝ 1584 թ.: — Վայրը՝ Բասեն, Ծառս գյուղի Սուրբ Խաչ վանքը:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 76բ. — Յիշեցէք զԲուդախն եւ կողակիցն՝ Անայ խաթունն եւ որդիքն՝ Պետրոսն, յԱւետիսն, դուստրն՝ Դովլաթն, Սալշուկն, որ յիշատակովք առ Աստուած փոխեցաւ, մնաց նորայ յիշատակն, զիւր փեսայ Մկրտիչն եւ կողակիցն՝ Գուլիկն եւ դուստրն՝ Զարդարն:

Դարձեալ յիշեցէք զՄիրիճանն, Մուրատխանն, Միրզէն եւ մայրն նորայ Խալասն,

յիշեցէք եւ լիաջկատար սրտիւ Աստուած ողորմի առացէք, Աստուած ձեզ յիշողացա եւ մեզ յիշեցելոցս Աստուած ողորմեսցի, ամէն:

Յիշեցէք Միրիճանն եւ իւր կողակիցն՝ Նուրմէլիքն, որդիքն՝ Վարդպարոնն, Կարապետն, Զատիկն: Յիշեցէք եւ Աստուած ողորմի առացէք, ամէն:

Աստուած ողորմի Բուդախի հոգոյն, որ Ա (1) ետուր ԺԲ (12) ֆլորու տեղ աւետարանիս կէս գինն, եւ Սարուբէկն, եւ եղբայրն իւր Կիրակոսն վայելուն, ետուն ԺԲ (12) ֆլորի, որդոյն իւր Տէր Կարապետ քահանային, խաղաղութեամբ վայել տացէ Աստուած եւ իւրոց վարձն բարին պարգեւեսցէ, ամէն:

Թ. 241ա-242բ. — ... Փառք համայգոյ եւ զուգայիսո զեռահիւսակ դաւանութեանդ... որ ետ կարողութիւն տկարութեանս եւ անարուեստութեանս հասանել ի վերջ քաղցրաձաշակ եւ քառաչոս աղբերս աստուածայխաւս սուրբ աւետարանս: Զեռեամբ յոգնայմեղ եւ անիմաստ սուտանուն Դաւիթ եպիսկոպոսի ի դառն եւ ի շար ժամանակի, որ հանգիստ ոչ կայր աշխարհի, որ գրով ոչ կարեմք սլատմել: Գրեցաւ երկրիս Բասենու, ի գեւղն, (որ) կոչի Ծառս, ընդ հովանեաւ Սուրբ Խաչ վանեացս, ի կաթողիկոսութիւն Տէր Գրիգորին, եպիսկոպոսութիւն սուրբ ուխտիս Տէր Ղազարին, թագաւորութիւն Սուլդան Մուրատին, ի թուականիս հայոց ՌԼԳ (1584 թ.), որ յարսմ տարոյս գնաց Ֆարհատ փաշայն ԳՃՌ (300,000) հեծելազաւուրք ի վերայ նրեան քաղաքին, փախոյց զտէղն, որ նստեալ էր անդ՝ Մահմետ խանն, եւ շինեաց անդ նորայհիմն բերդ մեծ եւ զարմանալի, որ բազում եկեղեցիք խաշ եւ տապանք քակեցին, եւ քարն ի բերդն տարան, քրիստոնէից ազգս ամէն թալանուեցաւ, որ առաջ քան հասանել փաշային ի քաղաքն նրեան, թաշալազգն արձակեց ի վերայ քրիստոնէից ազգիս, որպէս գայք ի վերայ ոշխարաց՝ քշեցին տարան մինչև Գանձայ ի հետ իւրեանցն եւ անդ թալանեցին, բազումս սպանին եւ բազումս գերեցին: Եւ ես անարժ(ան) գծողս անդ թալանած, փախըստական եկի եւ գրեցի սուրբ աւետարանս յիշատակ Սարուբէկին եւ ծնաւդացն, հարն՝ Ստեփանին եւ մարն՝ Աննային, եւ եղբարցն Կիրակոսին, Աւրդուբէկին, Տաւնայբէկին եւ Սարուբէկին, կողակցին Սիրայ խաթունին, որդոցն Աստուածատուրին, Տէր Կարապետին, Մկրտչին, դստերացն՝ Խաթունին, Մարգարիտին, Կիրակոսի կողակցին, Եղիսաբէթին, որդոյն՝ Ազիզբէկին, դստերն՝ Ալամիկին, Վարդէշաղին, Աւրտուբէկի որդոյն՝ Միրեթին, եւ ամենայն չարեան մեր-

ձատրացն, կենդանաց եւ ննջեցելոց, ամէն: Ով լուսերամ դասք քահանայից, որ հանդիպիք սուրբ աւետարանիս, յիշեցէք եւ յիշակատար սրտիւ Աստուած ողորմի ասէք, եւ Աստուած ձեզ ողորմեսցի իւր միւս անգամ գալըստեանն, ամէն: Դարձեալ յիշեցէք Աստուածատուրի կողակիցն՝ Նանէն եւ որդոյն՝ Ավրանբէկին, դստերն՝ Ուղիտային, ամէն:

Դրեցաւ ի ընդիր արինակէ: Աղաշեմ զձեզ, ով հանդիպողք, յիշեցէք մեղաւոր Դաւիթ գծողս եւ զծնաւղսն իմ եւ Աստուած զձեզ յիշէ: Դարձեալ յիշեցէք զԲաղջայ տատն եւ զիւր որդիքն՝ Վարդէորն, Աստուածատուրն եւ հանգուցեալ Տէր Սարգիսն, որ բազում աշխատանք արար, կերակրելով եւ սպասաւորելով, զիւր վարձն Աստուած բարին պարգեւէ, ամէն: Դարձեալ յիշեցէք զիմ աշակերտ Դրիգոր սարկաւազն եւ Աստուած զձեզ յիշէ իւր երկնից արքայութեանն, ամէն:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 6ա.— Յիշատակ է յայս սուրբ աւետարանս Դովլաթաբաթա:

Թ. 242բ.— Դարձեալ յիշեցէք ուստա Բաղմրամս, եւ Մատուրն, պապն խէչայտուրն, Յարութիւն, Իսայիսան, նորայ ծնողն՝ Ղազիկն եւ ուր կողակիցն՝ Մարինայ Շալշուկն եւ ուր ծնողն՝ Դօլան, ուր տղայից Սապիխան, եւ ուր ողորմի ասէք, ամէն: Դրեցաւ թուին փոքր ՃԾԶ (1771 թ.), Նադար Ժ.ումն:

Թ. 243ա.— Դարձեալ յիշեցէք ի Քրիստոսն զվերջին ստացաւ սուրբ աւետարանիս՝ զխօջայ Թեղանն, եւ զհայրն իւր՝ խօջայ Աստուածատուրն, եւ զմայրն իւր՝ Սէրանն, եւ զհօրեղբայրքն իւր հանգուցեալ ի Քրիստոս, պարոնք՝ Ամալն, խօջա Սուլթանումն, Նազարն, եւ կողակիցն իւր Խանփարի եւ զորդին իւր՝ պարոն Յովանէս, որ մանուկ տիօք հանգաւ ի Քրիստոս, յիշեցէք եւ Աստուած ողորմի առացէք, Աստուած ձեզ եւ մեզ ողորմեսցի իւր միւս անգամ գալըստեանն, ամէն: Հայր մեր որ յերկինս... թուականին ՌԿԷ (1618):

Թ. 244բ.— Յիշատակ է սուրբ աւետարանէն երկնայաթոռիչ եւ բացրայգունաց երիցս երանեալ սրբազան եւ սրբաշնուէր աստուայծաբան Եզեկիէլ Վարդապետիս: Յիշատակ է ի թվին ՌԲՃԼ (1781 թ.): մարտի ԺԲ, Տվի Յօվնունայ եկեղեցին:

№ 36

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

Թերթեր՝ 86:— Պրակներ՝ 11, յուրաքանչյուրը 8 թերթից:— Մեծութունը՝ 21×16×2 սմ.:— Նյութը՝ երկնագույն թուղթ:— Կազմը՝ կարտոն, կարմիր մաշ-

ված մետաքսյա կտորով պատած:— Վիճակը՝ բավարար:— Գրութունը՝ միասյուն:— Տողերը՝ միջին հաշվով 25:— Գիրը՝ նոսր:— Զարդագրութուն՝ կան սաւաղաթիվ թռչնագրեր:— Ժամանակը՝ 6 հոյեմբերի 1802 թ.:— Գրիչը՝ Ստեփան:— Կազմողը՝ տիրացու Հակոբ Գեորգյան:— Պահպանակ՝ սկզբում մի թերթ:

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՅԱԿՈԲ ՄԱՀՏԵՍԻ ԳԷՈՐԳԵԱՆԻ

Թ. 2ա.— Կանխաբանութիւն յաղագս օգտակարութեան կանոնագրոց եւ մանաւանդ հարկատրութեան նոցին առ ամենայն հաւատացեալս, եւ եւս առ քահանայս եւ առ եպիսկոպոսունս: (Ներածութիւն):

Թ. 3բ.— Աստուծօր յայտնին հեղինակի գրոց կանոնաց... (Օգտագործված գրականութեան ցանկը):

Թ. 5բ.— Ազդեցութիւն նշանակութեան անուանց յայրութեան կարգս զորս կրեաւ եղաք ի լուսանցս:

Թ. 7ա—85ա.— Կանոնագրքի տեխնիկ: Կանոնները դասավորված են այբուբենական կարգով «Ա»ից մինչև «Օ»:

Սկսում է՝ «Ազատ լիցին եկեղեցականք ի հարկաց. եւ թէ իշխան որ կամիցի առնուլ ինչ հարկս...»:

Վերջանում է՝ «Օր շարշարանաց Տեառն զկնի հասարակածին...»:

Թ. 85բ.— Ամենայն Հայոց Փիլիպոս կաթողիկոսի, Սսի Ներսէս կաթողիկոսի և Երուսաղեմի Աստվածատուր պատրիարքի կողմից կարգված կանոնները 13 կետից:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 86բ.— Եւ այս աւասիկ շատ լիցի տեսողացդ եւ ընթերցողացդ զայս կանոնագրութիւնս:

Տեսցուք այսուհետեւ զայնս՝ որք եղեն աւատճառք եւ օժանդակք գրգոյս եւ են արժանի յիշման, զորս աստէն դրոշմեմք եւ խնդրեմք ի ձերդ աստուածասիրութենէ, զի որք եւ ընթեռնուք զգիրս, յիշեսցիք ի Քրիստոս, նախ՝ զշարադրօղս սորին մահտեսի Գէորգեան զտիրացու Յակոբն:

Այլ եւ՝ յիշեսցիք զգծագրօղս սորին Եղորկիացի շնչին եւ անարժան ծառայ ըՍտեփանն հանդերձ կրկին ծնողօքն:

Եւ յիշողդ աշխատողացրս բարեպէս, յիշեալք լիջիք ի Քրիստոսէ արժանապէս, որում ընդ Հօր եւ Սուրբ Հոգւոյն համապատիւ ի համայնից մատուցի միշտ փառք եւ պատիւ, ամէն:

Աւարտեցաւ գրգուկս յամի Փրկչին 1802 եւ մերում թուականի ՌՄԾԱ (1802 թ.), ամսեանն հոյեմբերի Ե (5):

(Շարունակելի)